Նոտարական ակտի կոդ: 591-20170608-88-1346065
Նոտարական ակտի գաղտնագիր: 9KR0XV

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Վարդենիս
Երկու հազար տասնյոթ թվականի հունիսի ութին 08.06.2017թ.

ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնքը գրանցման վկայական՝ սերիա 01 Բ 837376, ՀՎՀՀ 08203584, ի դեմս լիազորված անձ՝ **Հակոբ Մյասնիկի Սահակյանի,** ծնված՝ 15.01.1991թ., անձնագիր՝ ԱՀ 0601792, տրված՝ 19.06.2008թ., 043-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Գետափնյա 1-ին փողոց, տուն 35 հասցեում, համաձայն 15.05.2017թ. տրված թիվ 05 լիազորագրի, մի կողմից **«Վարձատու»** և

<<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (գրանցման համարը՝ 286.185.892303, գրանցման ամսաթիվը, 17.03.2016թ., ՀՎՀՀ՝ 02647057, վկայականի համարը՝ 01Բ1042303) ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ **Արտակ Սահակյանի,** ով գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա, ու անունից հանդես է գալիս լիազորված անձ, ՀՀ քաղաքացի՝ **Սեվակ Հենրիկի Մուսիկյանը,** ծնված՝ 05.09.1966թ., անձնագիր՝ ԱՄ 0639399, տրված՝ 20.02.2012թ., 043-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղհովիտ, 5-րդ փողոց, 3-րդ նրբանցք, տուն 12 հասցեում, համաձայն 25.05.2016 թվականին տրված թիվ 1/18-1/18298-17 լիազորագրի, մյուս կողմից **«Վարձակալ»** , այսուհետ երկուսը **միասին կողմեր,** կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Ելնելով փոխադարձ պայմանավորվածությունից և գույքի փաստացի օգտագործումից, հիմք ընդունելով 23.07.2009 թվականին կնքված սեղանամատյան թիվ 1657-ով անշարժ գույքի վարձակալության պայմանագրում, վավերացված Մարտունու նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Վարիկի Մելքոնյանի կողմից (այսուհետև **«Պայմանագիր»**) կատարել հետևյալ փոփոխությունները.

2. Պայմանագրի 1.2 կետում նշված ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2(երկու) հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ (երկրորդ) հարկից 296.6 (երկու հարյուր իննսունվեց ամբողջ վեց) քմ. ընդհանուր մակերեսով և 4-րդ (չորրորդ) հարկից 60.0 (վաթսունն ամբողջ զրո) քմ. ընդհանուր տարածքը փոփոխել հետևյալ կերպ՝ նշված հասցեի վարչական շենքի 2-րդ (երկրորդ) հարկից 59.8 (հիսունինը ամբողջ ութ)քմ. և 2-րդ (երկրորդ) հարկի միջանցքը ընդհանուր օգտագործման:

2.1 Պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2(երկու) հասցեում գտնվող վարչական շենքի կադաստրային համար՝ 05-003-022-001, որպես ՀԱՊԵԿ հարկային աշխատասենյակներ օգտագործելու համար:

3. Պայմանագրի 2.5 կետում նշված վարձավճարի չափը փոփոխել և շարադրել հետևյալ կերպ՝ տարեկան 2 139 600 (երկու միլիոն մեկ հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամը փոփոխել և դարձնել ամսական 41 860(քառասունմեկ հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

4. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2017 թվականի հուլիսի մեկից ծագած հարաբերությունների վրա:

5. Պայմանագրի 2.5.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ վարձակալը պարտավորվում է վարձավճարը վճարել եռամսյակի կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակի համար ոչ ուշ, քան եռամսյակին հաջորդող ամսի 10-ը, վարձատուի հաշվեհամարին 2017 թվականի հուլիսի մեկից, նկատի ունենալով, որ նշված գույքը վարձակալի կողմից փաստացի օգտագործվել է 23.07.2009 թվականից:

6. Հաստատել 2017 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը, համաձայն թիվ 1 (մեկ) հավելվածի, որը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:
7. Պայմանագրի 2.9 կետում կատարել հետևյալ փոփոխությունները և շարադրել հետևյալ կերպ՝ գույքը վարձակալությամբ է տրվում անորոշ ժամանակով:

8. Պայմանագրի մնացած կետերը մնում են անփոփոխ:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում գրանցման պահից:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել :

2.3. Սույն Համաձայնագիրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը: Սույն համաձայնագիրի պայմանները տարածվում են կողմերի միջև 23.07.2009 թվականին ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվումէ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագրը ուժիմեջ մտնելու պահից Պայմանագրի անբաժանելի մասն է:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով : Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է **Վարձակալի** կողմից :

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի, սույն համաձայնագրից բխող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումում երեսուն օրվա ընթացքում:

Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է **չորս օրինակից,** որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է Վարդենիս նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:

Վարձատու՝ **ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնքի** լիազորված անձ՝ **Հակոբ Մյասնիկի Սահակյան**

Վարձակալ՝ **<<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի լիազորված անձ՝ Սեվակ Հենրիկի Մուսիկյան**

Երկու հազար տասնյոթ թվականի հունիսի ութին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ Վարդենիս նոտարական տարածքի նոտար՝ ՏԻԳՐԱՆ ՖԵԼԻՔՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրած անձանց ինքնությունը պարզված է, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի լիազոր ներկայացուցչի իրավունքները ստուգված:

Գրանցված է գրանցամատյանում 1094 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Տիգրան Ֆելիքսի Սարգսյան

Հավելված 1
23.07.2009 թվականին կնքված և սեղանամատյանում թիվ 1657 համարով
Գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում
փոփոխություններ կատարելու նպատակով 08.06.2017 թվականի
Վարդենիս նոտարական տարածքի նոտար՝ Տիգրան Ֆելիքսի Սարգսյանի
կողմից թիվ 1594 սեղանամատյանով վավերացված համաձայնագրի:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ միջոցների հաշվին				
	Ծառայության անվանումը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդհանուր՝ Տարին
1.	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2 հասցեում գտնվող վարչական շենքի	159 810	319 620	445 290	570 870	570 870

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆՈՏԱՐ
ТЕРРИТОРИЯ ВАРДЕНИС НОТАРИАЛЬНАЯ
TERRITORY NOTARY PUBL.
VARDENIS NOTARIAL
SARGSYAN TIGRAN
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ